Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առ այսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՉ Է ՄԵԶ ՍՈՎՈՐԵՑՐԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *Covid-19, համավարակ, համաճարակ, պատմություն, համաշխարհային տնտեսություն*

Համաճարակներն ունեցել են պատմական նշանակություն, հաճախ՝ նաև փոխել պատմության ընթացքը: Դրանք առաջացրել են տնտեսական կորուստներ, երբեմն էլ՝ մեծացրել բնակչության եկամուտները:

2019 թ. դեկտեմբերին Չինաստանում բռնկված համաճարակը 2020 թ. մարտին վերածվեց գլոբալ պանդեմիայի (համավարակի): Ինչպե՞ս կփոխվի գլոբալ տնտեսությունը, և ի՞նչ դասեր է քաղել պատմությունից համաշխարհային հանրությունը:

Հեղինակի հարցադրումները հանգում են հետևյալին. ինչպե՞ս կփոխվի գլոբալ տնտեսությունը, և ի՞նչ դասեր է քաղել պատմությունից համաշխարհային հանրությունը

Ակնհայտ է՝ գլոբալացումը, երկրների փոխկապվածությունը մի կողմից ստեղծում են զարգացման և տնտեսական աճի հնարավորություններ, իսկ մյուս կողմից՝ առաջացնում նոր մարտահրավերներ: Սույն թվականի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարեց կորոնավիրուսի համավարակի մասին: Իհարկե, աշխարհն առաջին անգամ չէ, որ բախվում է համավարակի կամ համաճարակի: Ներկա իրավիճակը, սակայն, ցույց է տալիս, որ համաշխարհային հանրությունը պատրաստ չէր դրան:

Համավարակները փոխել են պատմության ընթացքը: Բացի ահռելի մարդկային կորուստներից, դրանք տնտեսական վնասներ են հասցրել, իսկ երբեմն, որքան էլ տարօրինակ է հնչում, հանգեցրել բնակչության եկամուտների և բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Մարդկության պատմության ամենաածանր համաճարակը «Սև մահ» կոչվող ժանտախտն էր, որը տարածվել էր Եվրասիայում 1347-1352 թթ.: «Սև մահը» սպանեց Եվրոպայի բնակչության 2/3-րդին: Համաճարակը սկսվել էր Ասիայում: Բակտերիայի տարածողներն առնետներն էին, որոնք Ասիայից Եվրոպա էին հասել առևտրային նավերի միջոցով: XIV դարում բժշկությունը թույլ էր զարգացած, ինչն էլ հանգեցրեց մեծաքանակ զոհերի:

«Սև մահին» արմատական ազդեցություն ունեցավ Եվրոպայի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Համաճարակի ավարտից հետո կենդանի մնացած մարդկանց մեծ մասի կյանքի պայմանները բարելավվեցին[1]: Նրանք հարստացան՝ տեր դառնալով մահացածների ունեցվածքին: Բացի այդ, ահռելի թվով մարդկանց մահը Եվրոպայում հանգեցրեց աշխատուժի պակասուրդի, և հողատերերը ստիպված էին տեղի տալ գյուղացիների ճնշմանն ու բարձրացնել վերջիններիս աշխատավարձը: Շատ պատմաբաններ կարծում են, որ միջնադարյան ժանտախտը՝ աշխատավոր դասակարգի հզորացմամբ, նպաստեց ֆեոդալիզմի փլուզմանը և կապիտալիզմի վերելքին:

Ամենազանգվածային և իրապես համաշխարհային համավարակը պատմության մեջ 1918 թ. բռնկված գրիպն էր (H1N1), որը հայտնի է «իսպանական գրիպ» անվանումով: Գրիպի այս համավարակից ավելի շատ մարդ մահացավ, քան Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Աշխարհի բնակչության 1/3-րդը վարակվեց, ըստ տարբեր գնահատումների՝ մահացավ 50-100 մլն մարդ: Իսպանական գրիպի առանձնահատկությունը մահացության մեծ թիվն էր երիտասարդների շրջանում, ինչը նաև ենթադրում է ավելի մեծ տնտեսական ազդեցություն, քան այն դեպքում, երբ մահացության մակարդակը բարձր է լինում տարեցների շրջանում:

Գրիպի տարածումը կանխելու միջոցառումները նման էին ներկայումս կիրառվողներին. ձեռնարկությունները փակվում էին, արգելվում էին հավաքները: Հատկապես տուժեցին ծառայությունների և ժամանցի ոլորտի ձեռնարկությունները, որոնք ունեցան եկամտի երկնիշ կորուստներ: Միակ բիզնեսը, որ ծաղկում էր, դեղատներն էին: Աշխատուժի պակասուրդն առնվազն ժամանակավորապես հանգեցրեց աշխատավարձի բարձրացման[2]: Իսպանական գրիպն աչքի ընկավ նաև երկարաժամկետ ազդեցությամբ: Վարակված ծնողից ծնված երեխան ուներ ավելի ցածր կոգնիտիվ ունակություններ և նվազ առողջ էր, ինչը տնտեսական ակտիվության վրա անդրադարձավ տասնամյակներ անց:

Իսպանական գրիպի տնտեսական ազդեցությունն ուսումնասիրել են շատ հետազոտողներ: Ռ. Բարոյի և Ջ. Ուրսուայի գնահատմամբ, տիպիկ երկրի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն և սպառումը նվազել են համապատասխանաբար՝ 6 և 9,1 տոկոսով[3]: Բոլոր դեպքերում, իսպանական գրիպի տնտեսական հետևանքների գնահատումը բարդ է, քանի որ համաճարակը բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմի վերջին շրջանում, և դժվար է տարանջատել պատերազմի ու գրիպի հասցրած տնտեսական վնասները:

Նույն H1N1 գրիպի երկրորդ համավարակը բռնկվեց արդեն 2009 թ.: Սա նոր ենթատեսակ էր և ստացավ խոզի գրիպ անվանումը: Խոզի գրիպով վարակվեց աշխարհի բնակչության 24%-ը: Լայն տարածումը հիմք դարձավ համավարակ հայտարարելու համար: Իրականում, խոզի գրիպից մահացության մակարդակը կազմել է

[1] What can the Black Death tell us about the global economic consequences of a pandemic? March 4, 2020, http://theconversation.com/what-can-the-black-death-tell-us-about-the-global-economic-consequences-of-a-pandemic-132793

[2] Th. Garrett, "Economic Effects of the 1918 Influenza Pandemic", 2007, p. 21, https://www.stlouisfed.org/~/media/files/pdfs/community%20development/research%20reports/pandemic_flu_report.pdf

[3] R.Barro, J. Ursúa, J. Weng, The Coronavirus and the Great Influenza Pandemic: Lessons from the "Spanish Flu" for the Coronavirus's Potential Effects on Mortality and Economic Activity, NBER Working Paper No. 26866 March 2020, https://www.nber.org/papers/w26866.pdf

0.02 %, այսինքն՝ 5 անգամ քիչ, քան սեզոնային գրիպի դեպքում (0,1 %): Թերևս, սա էր պատճառը, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը մեղադրվեց «կեղծ» համավարակ հայտարարելու, կոռուպցիայի, դեղագործական բիզնեսն առաջ մղելու մեջ[4]: Փաստ է, որ դեղագործական կազմակերպությունները հսկայական գումար վաստակեցին: 2009 թ. համաճարակի գագաթնակետին «Տամիֆլյուի» համաշխարհային վաճառքը հասավ 3 մլրդ ԱՄՆ դոլարի[5]: Համաշխարհային տնտեսությունը, ընդհանուր առմամբ, զգալի կորուստներ ունեցավ, ինչը ոչ այնքան համավարակի, որքան խուճապի հետևանքով էր: Մեքսիկայում, որտեղ ծագել էր համավարակը, 2009 թ. զբոսաշրջության վնասները կազմեցին 5 մլրդ ԱՄՆ դոլար[6]: Տուժեց գյուղատնտեսությունը, մի շարք երկրներում ժամանակավորապես արգելվեց խոզի մսի ներկրումը: Համաշխարհային մակարդակում խոզի գրիպի վնասները գնահատվել են 45-55 մլրդ ԱՄՆ դոլար[7]:

Կորոնավիրուսի առաջին բռնկումը տեղի է ունեցել 2002-2003 թթ.՝ ստանալով Ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշ (SARS) անվանումը: Այն նույնպես ծագել էր Չինաստանում: Վարակը տարածվեց մոտ 30 երկրում, սակայն շատ կարճ ժամանակում հնարավոր եղավ կանխել դրա տարածումը: Ըստ ԱՀԿ տվյալների՝ համաճարակի ընթացքում 30 երկրում գրանցվել է վարակի 8436 դեպք, մահացածների թիվը 900-ից ավելի է եղել: Վարակվածների ամենամեծ քանակը գրանցվել է Չինաստանում և Հոնկոնգում: Ներկայիս կորոնավիրուսային հիվանդությունից տարբերվում էր նրանով, որ հնարավոր չէր վարակվել այն կրողներից, որոնք չունեին ախտանիշներ: Այս բռնկումից Չինաստանը մեծ դասեր է քաղել:

SARS-ը կարճ կյանք ունեցավ և ի հայտ եկավ տնտեսական համեմատաբար կայունության պայմաններում: Ասիական զարգացման բանկի գնահատմամբ՝ ասիական տարածաշրջանում տնտեսական վնասները կազմեցին 18-60 մլրդ ԱՄՆ դոլար, որը համարժեք է տարածաշրջանի ՀՆԱ 0,6-2%-ին[8]: Չինաստանի տնտեսության վրա զգալի ազդեցություն ունեցավ, բայց քանի որ Չինաստանը մեծ կշիռ չուներ համաշխարհային տնտեսության մեջ, վերջինս նշանակալի վնասներ չկրեց:

Արդեն փաստ է, որ նոր տիպի կորոնավիրուսը խոր ազդեցություն կթողնի համաշխարհային տնտեսության վրա: Մի շարք գիտնականներ փորձել են պարզել կորոնավիրուսի համավարակի հնարավոր հետևանքները: Ռ. Բարոն, Ջ. Ուրսուան և Ջ. Վենգը, որպես նոր տիպի կորոնավիրուսի համավարակի վատագույն սցենար, դիտարկել են «իսպանական գրիպը» և եկել այն եզրահանգման, որ կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական անկումը համեմատելի կլինի 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հետ[9]:

Մեր կարծիքով, Covid-19-ի տնտեսական ազդեցությունը տարբեր կլինի նախորդներից, քանի որ յուրաքանչյուր բռնկում տեղի է ունենում իրեն բնորոշ համատեքստում, և այսօր մենք ունենք բոլորովին այլ իրականություն: Covid-19-ն ունենալու է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, հոգեբանական ազդեցություն:

[4] J. Fox, Remember the Last Global Pandemic? Probably Not, 10 March, 2020, https://www.bloomberg.com/opinion/articles/2020-03-10/how-coronavirus-compares-with-2009-s-h1n1-in-spread-and-reaction

[5] A.Frangoul, Counting the costs of a global epidemic, 5 Feb. 2014, https://www.cnbc.com/2014/02/05/counting-the-costs-of-a-global-epidemic.html

[6] The global economy is woefully unprepared for biological threats. This is what we need to do, 05 Mar 2019, https://www.weforum.org/agenda/2019/03/our-economy-is-woefully-underprepared-for-biological-threats/

[7] A world at risk: annual report on global preparedness for health emergencies. World Health Organization; 2019, https://apps.who.int/gpmb/assets/annual_report/GPMB_annualreport_2019.pdf

[8] K. Hopkins, Pandemics that changed the course of history, 12 Jul 2009, https://www.theguardian.com/world/2009/jul/12/flu-pandemic-economic-impact

[9] R.Barro, J. Ursúa, J. Weng, The Coronavirus and the Great Influenza Pandemic: Lessons from the “Spanish Flu” for the Coronavirus’s Potential Effects on Mortality and Economic Activity, NBER Working Paper No. 26866 March 2020, https://www.nber.org/papers/w26866.pdf

Կփոխվի մարդկանց վարքագիծը, աշխարհընկալումը, դրանցով պայմանավորված՝ սպառման օրինաչափությունները: Մեծ կորուստներ կունենա զբոսաշրջության ոլորտը՝ առնվազն մինչև համավարակի ավարտը: Կազմակերպությունները կձգտեն զարգացնել տեխոլոգիաներ՝ ապահովելու հեռավար աշխատանքի հնարավորությունները: Covid-19-ը փորձություն է նաև ինտեգրացիոն կառույցների համար, որոնք ձախողեցին համաճարակի դեմ պայքարի միասնական և համակարգված մոտեցման մշակումն ու իրագործումը:

Թե որքան արագորեն համաշխարհա-

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. "A world at risk: annual report on global preparedness for health emergencies". World Health Organization; 2019, https://apps.who.int/gpmb/assets/annual_report/GPMB_annualreport_2019.pdf
2. A. Frangoul, "Counting the costs of a global epidemic", 5 Feb. 2014, https://www.cnbc.com/2014/02/05/counting-the-costs-of-a-global-epidemic.html
3. J. Fox, "Remember the Last Global Pandemic? Probably Not", 10 March, 2020, https://www.bloomberg.com/opinion/articles/2020-03-10/how-coronavirus-compares-with-2009-s-h1n1-in-spread-and-reaction
4. K. Hopkins, "Pandemics that changed the course of history", 12 Jul 2009, https://www.theguardian.com/world/2009/jul/12/flu-pandemic-economic-impact
5. R. Barro, J. Ursúa, J. Weng, "The Coronavirus and the Great Influenza Pandemic: Lessons from the "Spanish Flu" for the Coronavirus's Potential Effects on Mortality and Economic Activity", NBER Working Paper No. 26866, March 2020, https://www.nber.org/papers/w26866.pdf
6. "The global economy is woefully unprepared for biological threats. This is what we need to do", 05 Mar 2019, https://www.weforum.org/agenda/2019/03/our-economy-is-woefully-underprepared-for-biological-threats/
7. Th. Garrett, "Economic Effects of the 1918 Influenza Pandemic", 2007, p. 21, https://www.stlouisfed.org/~/media/files/pdfs/community%20development/research%20reports/pandemic_flu_report.pdf
8. "What can the Black Death tell us about the global economic consequences of a pandemic?" March 4, 2020, http://theconversation.com/what-can-the-black-death-tell-us-about-the-global-economic-consequences-of-a-pandemic-132793

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

ЭКОНОМИЧЕСКОЕ ВОЗДЕЙСТВИЕ ЭПИДЕМИЙ: ЧЕМУ НАС НАУЧИЛА ИСТОРИЯ?

Эпидемии имеют историческое значение, часто также меняют ход истории. Они вызвали экономические потери, а иногда увеличивали доходы населения.

Эпидемия, вспыхнувшая в Китае в декабре 2019 г., превратилась в глобальную пандемию в марте 2020 года. Как изменится глобальная экономика, и какие уроки извлекло мировое общество из истории? Рассуждения автора приводят к следующему: как изменится глобальная экономика, и какие уроки извлекло мировое общество из истории?

Ключевые слова: *COVID-19, пандемия, эпидемия, история, всемирная экономика*

Shushan MOVSISYAN
Expert at AMBERD Research Center, ASUE

ECONOMIC CONSEQUENCES OF PANDEMICS: WHAT WE HAVE LEARNED FROM HISTORY

Pandemics are believed to change the course of history. They caused significant economic disruption, but sometimes resulted in income increase.

Coronavirus outbreak first identified in China in December, 2019, is declared to be a pandemic in March, 2020. In what way it will change global economy and what lessons international community have learned from history? The thoughts of the author leads to the following: in what way it will change global economy and what lessons international community have learned from history?

Keywords: *COVID-19, pandemic, epidemic, history, world economy*